Է. Թուանշաններ.

(պակասները լրացուցած եմ Ասորեստաներէնէ).




(Շարունակելի։)

Հ. Ց. ԱՃԱՌԵԱՆ

# ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ

Ա.

*Ցուցակ Ձեռագրաց Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյն:*

(Շարունակութիւն։)

## 11.

## ԱՒԵՏԱՐԱՆ

ՋԼԹ = 1490։

*ԹՈՒՂԹՔ՝ 271, որոնցմէ առաջինը եւ վերջինը մագաղաթեայ պահպանակ առանց գրութեան: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27×18×8 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւրը 19×5 սմ.: – ԳԻՐ՝ բոլորգիր, թանաք՝ սեւ, սկզբնատողերն ու սկզբնատառերը կարմիր. տող՝ 21: – ՆԻՒԹ՝ թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ. առաջին կողին վրայ արծաթեայ զարդարուն շրջանակ, մէջը քսեռներ եւ 5 խաչ՝ կարմիր ու դեղին ակներով: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր: – ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա—2ա, 15բ եւ 270ա–271բ: – ԼՈՒՍԱՆՑԱՋԱՐԴՔ՝ բազմաթիւ, բաւական լաւ. էջ 2բ–10ա տնօրինական 16 պատկերները եւ իւրաքանչիւր աւետարանի սկիզբը դրուած 4 աւետարանչաց պատկերները անարուեստ:*

*ԳՐԻՉ՝ Հայրապետ աբեղայ որ արտագրած է Գէորգ աբեղայի օրինակէն. տէր՝ Դովլաթ խաթուն. ծաղկող՝ Կարապետ. տեղ՝ Աղթամար. թուական՝ ՋԼԹ — 1490:*

Մատեանս է Աւետարան, որ կը պարունակէ էջ 2բ—10ա պատկերներ. էջ 10բ—15ա Եւսեբի կարպիանոսի եւ կանոնք. էջ 16ա նախադրութիւն Մատթէոսի. էջ 17ա – 89ա Մատթէոս. էջ 90ա—135բ Մարկոս. էջ 136ա նախադրութիւն Մարկոսի. էջ 137ա—214ա Ղուկաս. էջ 214ա Ղուկասի վրայ 4 տող ոտանաւոր. էջ 215ա – 266բ Յովհաննէս։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 9բ (պատկերին վրայ) խաթուն մելէք. գովլաթն է։

Էջ 136ա (ստար գրչէ). քն ած յուսաւորեա զհոգի ուսթա աւէտի հոգին եւ զիւր կողկցն սուլթնին եւ զիւր ծնօղցն. ամիրխանին եւ շահումին. եւ եղբօրն սարուխանին. եւ իւր որդոցն. յհնին. մրաբն եւ սաֆգսին եւ յոհանիսի որդ՟ն սահակին։ Դձլ ած ողոմի սասցէք պարոն ուսթա աւէտին որ ազատեաց զաւտ՟նս յանօրինաց. յիշատակ իւրս հոգոյն. եւ իւրս ծնօղացն եւ իւրս ամ արեան. մերձւրցն. ամէն։ Իւ եռուր ի գուռն. հոգոց վանից ձր ածածին.

Էջ 266բ (Գլխաւոր յիշատակարան). Փառք անպարագիծ էին այնմ որ ոչ են հետազաւտ. եւ ոչ զինչ պխոին։ եւ ոչ քանակն։ համբարձելոյն յամ մտաց ըլացման գոհութի անզնին գոյին որ է քան կնիք եւ սահման էին փառատրութի անպարփմանալի սեռին. որ է հոգի համագոյ էին եւ փառ ակից բանին։ որ տրամադրեաց զմատուես մեղամած վերջացեալ տկար ոգւոյ գէորգի նուաստ կրաւնաւորի գրեալ եւ կարգեալ զճառս երախտեաց ածագործ սքանչելեացն։ (շարունակութիւնը էջ 268ա) զոր ճշմարիտ եւ ածն բան. միածին որդին այ յն քն, 'ի վախճան աւուրցս այսոցիկ կատարեաց զնշանս եւ զարուեստս. ո՟րպ զի որք ընթերցին 'ի միա ասցեն եւ ծանիցեն թէ նոյն աս է որ մովսեսի հրամայեաց առնուլ գառն տարեւոր. եւ յիշել զերախտիս ածութե որ յեգիպտոս. նոյն եւ ատեցոյց մեզ յիշատակ չարչարանաց իւրոց։ որ ոչ միայն պէսպէս նշանաւք լուսաւորեաց։ այլ եւ չարչարանաց եւ մահու համբերեաց։ զի գիտէր թէ լսելով զանարգանս ան մերում զարձ եղիցի 'ի մեղաց մերոց։ (Հոս կը վերջանայ գէորգի բնագրին յիշատակարանը. յաջորդ բաները Հայրապետի յիշատակարանէն սկիզբն են) Արդ այսմ գաղափարութե։ Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ իմն ցուցմամբ տեսանի. զի ոմանք ասեն. թէ չորից աւետարանչացն. են չորք անկիւնք արարածոց։ Արեւելք՝ եւ արեւմուտք. հիւսիս. եւ հարաւ. պարտէր համասփիւռ քարոզել զաւետարանն։ Իսկ ոմանս հանճոյ թըւեցաւ ըստ չորից մըշտահոս գետոցն յադենակա՛ն աղբերէն յառաջխաղացեալ առ ի տէզերաց ոռոգումն։ Փիսոն. գեհո՛ն տիգրիս. եւ եփրատէս. եւ սոցա զոլով նմանապէս թուով ուռճացեալք է կենդա ի կենդանակա՛ն աղբերէն. ոռոգանել զպասքեալ միտս մարդկան. նո՛յն աւրինակ. ըստ տեսութեն եզեկիելի. քառակերպեան աթոռոյն։ Մա՛րդ։ Առիւծ։ Եզն։ եւ Արծիւ։ զանմարմնոցն ար՝ տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ վկնամս բոլոր բնութեն. զակնարկումն. որ ածապէս եւ տիրա-

բար բերմամբ նշանակէ զլինելն առ 'ի հողածինս. հոգեղինացն անմահից զմահկանացուս առնել հաղորդ. եւ ի գերակատար հանել 'ի փառս. վասն զի փառաց թագաւորն քն. փառակից հաւր եւ հոգւոյն սրբոյ զմեզ առնել բնութի յինքեան միացոյց ածութենն. ուսուցանելով մի որդի դաւանել. որ յմյ հաւրէ եւ որ 'ի մարիամայ նք կուսէն անճառ միութք. զոր աւետարանականն ուսուցանեն բանք մինչ 'ի կատարած հաւատութք. եւ հաստատ կարգաւք 'ի նոյն յարելով առաքելաւ (չարունակել էջ 267ա, որ սխալ գրուած է) անդն քարոզութե. որ զածախաւսն վարդապետութի դրոշմեալ զաւակաւս 'ի բազմացն առ 'ի հաւատալ. թէ յն քն է որդի այ. ըստ վեհին յովհաննու հաւատալ. եւ զկեանս յաւիտենականս ընդունել յանուն նր: Ուստի եւ տեսեալ զսորա անճառ փրկագործութե խորհուրդ ածասէր եւ իմաստուն կինս այս գովլաթ: Խաթուն եւ ետ գծագրել զձր աւետարանս ի հալալ եւ յարդար վաստակոց իւրոց ծնողացն իւրեանց. հաւրն շաքարին. մաւրն խաթուն մելէքին: եւ հաւրն սանփանոսին. եւ մաւրն. փաշին. եւ եղբաւրն թումին. եւ խաթուն մելեքի հաւրն. սանփանոսին եւ մաւրն փաշին. աղբօրն շաքարին եւ ածատրուն: եւ մօրն շահրստանին. եւ որդոյն սարգսին եւ մուրադին. ածատրուն. եւ գրիգորին. եւ ֆըւէրն շահստանին եւ ռուէրիչ մ—տա—շին: այլ եւ ամ արեան մերձաւորաց նոցին. կենդանեաց եւ հանգուցելոց. եւ ետուն զսա ընծայ եւ նուէր ի դուռն հոգոց վանից նք ածածնին ընծայ. յիշատակ անջնջելի. եւ կըտակ անդառնալի. որպէս զի հրճուեսցին սովաւ մանկունք նք եկեղեցոյ. եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ ած ողորմի ասեն Խովլաթ խաթունին. եւ խաթուն մելեքին: եւ մօրն նորին. եւ ծնաւղացն նոցին եւ ազգականացն: Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց. եւ անարժանս ի կարգաւորաց՝ ռուստանուն աբեղայ հայրապետ. տեսի զսէր եւ զփափաք սորա զոր ունէին առ հոգեւորն. եւ իմով իսկ տկարութքս յանձն առի. եւ ամենակարող զաւրութբն այ կատարեցի զսա մեղսամած մատամբ իմով յածայահ կըղզիս աղթամար. ընդ հովանեաւ ամենայաղթ նք խաչիս. եւ նք սարգիս զաւրավարիս. ի հայրապետութե տն զաքարիայի: Եւ ի թըւականիս մերում. 'ի ջլթ: զոր իմ անընդունակ գալով. յարուեստ գրչութե. եւ բազում մեղացն ցընորիւք պաշարեալ այլ ըստ կարի իմում զոր պարգեւեաց ինձ մարդասէր հոգ (էջ 269ա) բազում աշխատանօք գծագրեցի զսա ի սոյդ եւ յընտիր աւրինակէ. կենաւք տառապանօք. ի զա՞ն եւ 'ի վըշտաբեր ժամանակիս. յորում կամք ընդ հարկի անօրինաց: Արդ՝ որք ճաշակէք յածային բուրաստանէս. եւ յամենալի սեղանոյս՝ որք պատահիք սմա. տեսութբ կամ ընթերցմամբ. յիշեսջիք յերկնագնաց յաղօթս ձեր. զյառաջյիշեցեալ նք աւետարանիս ստացողսն. զգովլաթ խաթուն. եւ զծնաւղսն իւր. զշաքար եւ զխունտմելէք. եւ հաւրն սանփանոսին. եւ մօրն փաշամելէքին. եւ քըւերն սուլտանմելէքին. եւ քեռուն թումին. եւ հաւրեղբօրն ածատրուն. եւ որդոյն սարգսին եւ մուրադին. ֆըրէֆոան. եւ շահըստանին. եւ միրալին որ միջնորդ եղեւ նք աւետարանին. միրտշին եւ ուր որդոյն յովանիսէն. եւ մօրն դէկիչին եւ սանփանոսին: եւ զայլ ամ ազգատոհմն նոցին զկենդանիսն եւ զհանգուցեալսն յիշեցէք ի քն. եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ ած ողորմի ասացէք գովլաթ խաթունին եւ մօրն խաթունմելէքին: եւ ած յիշողացդ եւ յիշեցելոցս ի սմա առհասարակ ողորմեսցի քն ամէն:

Ընդ նոսին եւ զանպիտան հայրապետ մեղաւք գծողս. յիշեցէք յաղաւթս ձեր. որ զձեւ ունիմ կրաւնաւորի. եւ ի գործոց թափուր եւ ունայն. եւ զծնաւղս իմ. զխաչատուր եւ զռուկի տիկին. եւ զեղբայրն իմ. զյոհանէս. եւ զկենակիցն իւր. զշարմելիք. եւ զեղբաւրորդին իմ. զկարապետ քհայն որ ծաղկեց զձր աւետարանս. եւ զերախտաւոր քեռ(ի)ն իմ. զմինասենց թումայն. եւ զծընաւղսն իւր. եւ զամ արեան մերձաւորքն մեր զկենդանիսն եւ զհանգուցեալսն. եւ լի բերանով եւ ուղիղ մտաւք ած ողորմի ասացէք մեզ եւ ձեզ ողորմեսցի քն յիշողացդ, եւ յիշեցելոցս ի սմա. ամէն: Եւ արդ՝ ես Խովլաթխաթունս (այս անունը նոյն կնոջ ձեռքով գրուած) տուի զձր աւետարանս ի հոգոց վանից նք ածածնի դուռնս. եւ մի ոք իշխեսցէ հեռացու (Մնացեալը 'չկայ):

Էջ 269ա (ստորին լուսանցքին վրայ) Եւ դարձեալ երես անկեալ աղաչեմ զձեզ ով ընթերցողք եւ լսողք ուղիղ սրտիւ եւ լի բերանով ած ողորմի ասացէք վերըստին նորոգողիս եւ կազմողիս. ռուստանուն նեկղոսիս եւ հօրն իմոյ տր սատմին եւ [մօրն ի]մո գուլբահարի եւ ամ արեան մերձ[աւորացն]:

Էջ 269բ (ստորին լուսանցքին վրայ) Այլ եւ յիշեցէք ի քն եւ զաւետիս քհայն որ մին 'Մնացեալը չկայ):

## 12.

## ԱՒԵՏԱՐԱՆ

### ՌՃԻԵ = 1676:

*ԹՈՒՂԹՔ՝ 361: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11×9×6 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւրը՝ 8×2.5 սմ.: — ԳԻՐ՝ բոլորգիր. Թանաք՝ սեւ, սկզբնատողերն ու սկզբնատառերը կարմիր եւ կապոյտ. տող 17: — ՆԻՒԹ՝ թուղթ: ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ. առաջին կողին վրայ արծաթեայ կոպիտ խաչ մը՝ մէջտեղը կարմիր ակով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա—4ա եւ 357բ—361բ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ միայն ուրուագծով, բաւական յաջող. չորս աւետարանչաց պատկերները անյաջող: — ԳՐԻՉ՝ Իսահակ. կոկող՝ Անդրէաս դպիր. տեղ Աստապատ. Թուական ՌՃԻԵ = 1676 Նոյ. 29:*

Պատեանս է Աւետարան, որ կը պարունակէ. Մատթէոս էջ 5ա—127բ. Նախագրութիւն Մարկոսի էջ 127բ—128ա. Մարկոս էջ 129ա—190բ. Նախագրութիւն Ղուկասու էջ 190բ—191ա. Ղուկաս էջ 192ա—287ա. Նախագրութիւն Յովհաննու էջ 287ա. Գլուխք Յովհաննու էջ 287բ—288ա. Յովհաննէս 289ա—356բ:

ԳԼԽԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Էջ 356բ. Փառք քեզ կնի +ոյօղ: Արեգական ͦն: Կիսագնդի: Եւ գեմարի: Ած: Շնորհօք եւ ողորմութբ ամենազօրին յԱՅ հօր եւ որդւոյ եւ հգւյն սրբոյ աւարտեցաւ նք աւետրնս. ձեռամբ ամենամեղ գրչի իսահակայ բանի վասնորի եւեթ. անմեղադրք լերուք անյարմարութենս. քնզի. ծր. ամց էի ա՝չքս վատացլ էր ի տեսութենէ. կոզլուկով այաքնս յայտ բերի. սխալանացս թողութի շնորհեցէք. ժամկն ցուրտ էր. զի եւ դուք թղթի գտջիք ա ՜ննզօրէն

digitised by A.R.A.R.@

յա՞յ. ի վանքն Աստապատու. ի թուականիս հայկազան տօմարի. ՌՃԻԵ յամսեանն նոյեմբերի. ի. ԻԹ. ի թգւին պլատեալ. Շա՛հ սուլէյմանի. Թղթիս կոկող անդրէաս դպիրն յիշէ՛։

## 13.

## ԱՒԵՏԱՐԱՆ

### ՌՃԷ = 1658։

*ԹՈՒՂԹՔ 251: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26×19×6 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր, երկսիւն՝ իւրաքանչիւրը 18×6,3 սմ. — ԳԻՐ՝ բոլորգիր. թանաք՝ սեւ, սկզբնատողերն ու սկզբնատառերը կարմիր եւ կանաչ. տող՝ 20: — ՆԻՒԹ՝ թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ. առաջին կողին վրայ քառակուսի շարուած են 9 խաչ, արծաթեայ. իւրաքանչիւրը 5 խոշոր քեւեռներով, կողերուն եզերը իբր պահպանակ կպցուած է տպեալ շարականի մը թերթերը: – ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ չկայ: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 2ա, 31բ, 69բ եւ 251ա-բ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐՆ ու պատկերները հասարակ ու անարուեստ: – ԳՐԻՉ՝ Գրիգոր քահանայ Թուական ՌՃԷ = 1658. տեղ՝ անծանօթ. տէր՝ Թուի գրիչը:*

Մատեանս է Աւետարան, որ կը պարունակէ. Գլուխք Մատթէոսի էջ 1ա—բ եւ 3բ. Եւսեբի Կարպիանոսի էջ 2բ. Մատթէոս էջ 4ա—67բ. Գլուխք Մարկոսի էջ 68բ - 69ա. Մարկոս էջ 70ա—114բ. Գլուխք Ղուկասու էջ 115ա—116բ. Ղուկաս էջ 117ա—191բ. Գլուխք Յովհաննու էջ 192ա. Յովհաննէս 193ա – 249ա։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 3ա (ստոր գրչէ, նօտրագիր). փառք ամենայն երրորդութեան եւ ի միոյ աստուածութեան որ եւ ետ ամենակարող զօրութեամբն կատարել եւ լինել զաշխարհս ամենայն ուր անբաւ զօրութեամբն եւ տայ ամենեցուն ուրախութեան վարձս եւ արժանի արասցէ ուր քաղցր արքայութեան ամէն յիշատակ է սբ աւետարանս մահտեսի եղիկեան պապէին որ եւ գնեաց իւր հալալ արդեան եւ վաստակօքն յիշատակ իւր ծնողացն մելքոնին եւ եւ ի դուռն ծիրանաւոր սբ աստուածին ի յիշատակ իւր եւ իւր ծնողացն օվ հայր սբ քահանայք եւ եղբայրք իմ սարկաւագունք եւ որ հանդիպիք այս սբ աւետարանի կարդալով յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զանարժան ծառայն ձեր պապէն եւ զհայրն իմ հանգուցեալ մելքոնն հայր մեղիւ մեզ յիշեսջիք եւ դուք յիշեալ լինիք ի քնէ ամ մերմէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ ամէն օվ սիրելի եւ պատուական հարք եւ եղբարք իմ պատմեմ ձեզ զբանս այս սբ աւետարիս քանզի անկեալ էր սբ աւետարանս գերի ի ձեռս այլազգաց եւ ես անարժանս տեսանելով զսբ աւետարանս ի ձեռս անօրինաց գթացեալ եւ մորմոքեցաւ սիրտ իմ ի փորի իմում եւ իմ հալալ արդեամբն առի եւ ազատեցի եւ եդու յիշատակ փրկութեան հոգւոյ ծնողին իմոյ մելքոնին եւ որ հանդիպիք ընթեռնելով հայր մեղիւ մեզ յիշեսջիք եւ դուք յիշեալ լինիք ի քնէ ամ մերոյ ամէն գնեցաւ ՌՄԿԴ յունիսի ին պայազիդ ի դուռն ծիրանաւոր սբ աստուածին։

Էջ 4ա (Մատթէոսի սկիզբը իբրեւ գլխազարդ շինուած է հետեւեալ վերտառութիւնը) Զծնողն իմ սամուէլխանն յշեք՝ հայրն իմ զանդրէասն՝ մեղապարտ գրիգորս յիշեցէք աստ ձեզ յիշ թվ ՌՃԷ։

Էջ 68ա. Ած ողորմի մեր հոգեւոր վարպետացն աւետին. եւ հայրն իմ անդրէասին. եւ մօրն իմ. սամարխանին։

Էջ 249ա (Գլխաւոր յիշատակարան). Աւաղ զիս զսարտակուսեալ գրիչս՝ անարժան ստասաւոր եղէ սբ աւետարանիս՝ փառք անճառելիապանըն. եւ ըսկիզբն ամի. անեղին՝ եւ գոյացուցչին՝ բնաւից անվախճան՝ եւ անսահման էացուցին. սահմանիչ եւ կատարումն՝ բոլորեցուն. երեցս միակին՝ եզակին՝ եւ միում աստուածութեան՝ որ անչափ գոլով չափէ. զարարածս ի կեանս՝ եւ ի փրկութիւն՝ էից՝ էակն՝. եւ կենդանեաց՝ կեանքն՝ որ անփոփոխ գոլով միշտ՝ յէութեան՝ անեղը՝. եւ անվայրափակ. լրումն՝ եւ բովանդակիչ ամի. որ յամս է եւ յամէ՝, անհաս է ողն ի մասունս՝ եւ ի բոլորս՝. եւ ինքն ոչ մասն եւ ոչ բոլոր՝ ողն թէ զմասն՝ եւ զբոլոր զամ ինքն ունելով եւ կրէ զամ բանիւ զօրութեան իւրոյ՝ գերալեր գոլով լինել զամ. եւ անհաս է. յամէ ողն բան՝ եւ իմաստութիւն եւ լեզու ասուեալ՝ բոլորեցու. ի բոլորեցս հանգուցք ամենութեան եւ փառս հօր եւ որդոյ՝ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ։ Ի՛ չորից աւետարանչացն՝ խորհուրդ բազում օրինակ լինի ցուցմամբ՝ տեսանի զի ոմանք ասեն՝ թէ չորից՝ աւետարանչացն են՝ չորք անկիւնքն արարածոց. Արեւելք. Արեւմուտք. Հիւսիս. Հարաւ. պայծառ էր քարոզել համասփիւռ զաւետարանն՝. Ի՛սկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոսս գետոցն, յաղենական աղբերէն՝ յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց ոռոգումն, փիսոն. գեհոն. տիգրիս. եւ եփրատէս. եւ սոցա գոլով նմանապէս թուով, ուսուցեալք ի կենդանական՝ աղբերէն. ոռոգանէր զպարտէզ միտս մարդկային բնութեանս. Նոյն օրինակ՝ ըստ տեսութեան՝ եզեկիէլի. քառակերպեան, աթոռոյ. Մարդ. Առիւծ. Եզն. Արծիւ. զանմարմնոց տէր տեսանելով բազմեալ ի փառաւորն աթոռ. իմանալի ցուցմամբ. զինամն բոլոր բնութեան զակնարկումն. որ աստապէս եւ տիրաբերմամբ նշանակէ զլինելն. առ ի հողածինս. հոգեղինաց անմահից զմահկանացուս տանել հաղորդս. Ե՛ւս ի գերակատար հանել. ի փառս։ Վն զի փոխ թագաւորն քն. փառակիցն. հօր եւ հոգւոյն սրբոյ զմերս առեալ բնութիւն ինքեան միացոյց աստուածութեանն ուսուցանելով մի որդի դաւանել՝ որ յամ հօրէ. եւ որ ի մարիամէ սբ կուսէն անճառ միութեամբ. զոր աւետարանչացն ուսուցանեն՝ բանք՝ մինչ ի կատարած՝ հաւանութեամբ՝ հաւատահաստատ կարգօք ինոյն յարելով յառաջելոյ անդ քարոզութիւն՝ որ զամծախօսն վկայութիւն՝ գրոշմեալ զաւետարան ի բազմացն առ ի հաւատալ՝ եւ զկեանսն յաւիտենականս ընդունել՝ յանուն նր. եթէ յն քն է որդի ամ ըստ վէհին յովհաննու հաւատալ, Ուստի տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ հեզահոգի եւ բարեմիտ անդրէասն եւ ամուսինն իւր սամարխանն՝. եւ քհ որդին սոցա գրիգոր անարժանս յիշեցէք ի սբ յաղօթս ձեր. եւ ամէքս մէկ բերան ողորմի ասէք լի սրտիւ եւ դուք յիշեալ լինիք ի քէ ամ։

(Շարունակելի։) Հ. Ց. ԱՃԱՌԵԱՆ

digitised by A.R.A.R.@